Մեր հիւրընկալը երեւաց եւ բաւական ծանր, լրջահայեաց մարդ: Ասլանը խօսում էր նրա հետ քաղաքի մասին, հարցնում էր, թէ որքան բնակիչ ունի, որքանը մահմեդական է, որքանը հայեր են, քանի եկեղեցի ունեն, քանի դպրոց ունեն: Նա բոլոր հարցերին բաւական ճիշտ տեղեկութիւններ էր տալիս:

— Մահմեդականների հետ ձեր յարաբերութիւնները ինչպէ՞ս են:

— Ինչպէ՛ս պէտք է լինի, — պատասխանեց նա տխուր ձայնով. — կողոպտում են, չենք բողոքում, հայհոյում են, ձայն չենք հանում, թքում են մեր երեսին, համբերում ենք, եւ այդպէս կառավարւում ենք միմեանց հետ: Եւ ասում են, թէ հայն ու տաճիկը լաւ են «յոլայ գնում»...

Այդ միջոցին Արփիարը գլուխը վեր բարձրացրեց իր պառկած տեղից եւ, դառնալով դէպի տան տէրը, ասաց.

— Ձեր յայտնած թոանշանները ինձ համար շատ հետաքրքիր են. մօտաւորապէս քանի՞ տուն են հաշւում այդ քաղաքում:

— Մօտաւորապէս 2,500 տուն, որոնցից հազար տունը հայեր են, մնացածը՝ քուրդ եւ տաճիկ:

— Որքա՞ն գիւղ կայ Մուշի ամբողջ դաշտում:

— Հայաբնակ գիւղերը 100 կարելի է հաշոել, իսկ մի 8 կամ 10 գիւղ քրդաբնակ են:

— Հայաբնակ գիւղերի իւրաքանչիւրը միջին թոով քանի՞ տուն կունենայ:

— Իւրաքանչիւրը միջին թոով կունենայ 70 տան:

— Ուրեմն 100 գիւղը 7.000 տուն: Իսկ իւրաքանչիւր տունը որքա՞ն հոգի կարելի է հաշոել:

— Իւրաքանչիւր տունը 10 հոգի կարելի է հաշոել:

— Դա շատ չի՞ լինի:

— Ոչ, շատ չի լինի, որովհետեւ մեր գիւղերում այնպիսի ընտանիքներ կան, որ 20, 30 կամ աւելի անդամներից են բաղկացած:

— Այսոամենայնիւ 10 հոգի մեծ թիւ է: Ընդունենք այդպէս եւ կը ստանանք հետեւեալ թոանշանները: Ամբողջ Մուշի դաշտի մէջ 100 հայաբնակ գիւղ, 7.000 տուն եւ 70.000 բնակիչ: Եւ եթէ դրա վրայ աւելացնենք քաղաքի 1.000 տան բնակիչները, ընդամէնը կը լինի 80,000 բնակիչ: